

քով քանդելու եւ մէջի սրբութիւնները Նոր Զուգայ տեղափոխելու, որպէսզի Հայերը յուսակտուր ըլլան եւ Պարսկաստան ու Նոր Զուգայ հաստատուին: Սակայն, նախ քան իջմիածնայ քանդման ձեռնարկելը, այն ատենուան Հայոց ամենանուիրական սրբութիւնը կ'ուզեն բռնի ձեռք բերել եւ Նոր Զուգայ փոխադրել: Շահ Ապպաս Մեծ կը հրամայէ Թահմազդուլի խանին, որ նախ «գնշանաւոր քարինս իջմիածնի քակեալ հանցես ի տեղւոյն» եւ զայն քակեալ քարինսն իջմիածնի, եւ զլուսաւորչի Աջն, եւ զաւետարանն, եւ զխաչն, եւ զՄեկքիսէթ կաթողիկոսն, զամենեւեան զոռոտ առաքեսցես գնալ ի քաղաքն Ասպահան»:19)

Այլը ի պահ կը դբուի Սպահան Սոջայ Սաֆարի տունը Հոնիսիմէի նշխարներուն առնիքներ:

Մեկքիսէթ, թէեւ ենթարկուեցաւ չարչարանքներու Շահին մօտ ամբաստանուած ըլլալուն պատճառով, բայց կրցաւ ազատիլ Շահին ահարկու դատաստանէն:

Մովսէս վարդապետ առ Գրիգոր Կեսարացի իր թուղթին մէջ (1615) կը վկայէ. «Դարձեալ ասաց յիշխանն Հայկազ, թէ Սոջայ Նազարն տուաւ ունել զՄեկքիսէթն ի Շահոյն, զոր սպանել տայր. ես (Հայկազ) աղաչեցի Սոջայ Նազարն որ եթող»:20)

Դաւրիթեցին ալ կը պատմէ, թէ Մեկքիսէթ Շահէն 300 թուման տուգանքի դատապարտուած էր եւ չէր կրնար ազատիլ «քրիստոնէից մեծամեծք, որ էր Սոջայ Նազարն, եւ Սոջայ Սուլթանումն, եւ Միրվէլին, եւ մելիք Հայկազն, եւ այլք բազումք, ասացին ցՄեկքիսէթ կաթողիկոսն, անհնար եղև գործդ քո՝ այլ պարտիս տալ (300 թուման տուգանքը) եւ գերծանիլ ի ձեռաց սորա»:21)

Մովսէս վարդապետի թղթին համաձայն, մելիք Հայկազ կը միջմտէ Սոջայ Նազարի մօտ, որպէսզի վերջինս չհետապնդէ Մեկքի-

սէթի պատժուիլը, այլ միջնորդէ Շահին մօտ անոր փրկութեան համար:

Դաւրիթեցիի մօտ դէպքը կը տարբերի քիչ մը: Սակայն, մենք կրնանք համարձակ ընդունիլ, որ այս դէպքերը սկիզբ առած էին 1614-ին եւ, երբ 1615-ին Մովսէս կը գրէր Գրիգոր Կեսարացիին, ատոնք արդէն պատահած էին, թէեւ Հ. Ակինեան հարցական նշանով մը կ'ուզէ որ այս դէպքերը 22) 1612-ին կատարուած ըլլան ինձ անմեկնելի պատճառաբանութեամբ ժը:

Ինչպէս արդէն ըսի, Շահը մտադիր էր նոյնիսկ իջմիածինը հիմէն քանդել եւ Նոր Զուգայ տեղափոխել եւ Սպահանի մէջ «բաղ ի զրիշկ» ըսուած այգիի մը կից տեղ մը վերըստին հին ձեւով կառուցանել: Եւ յաւուր միում գնաց Շահն ի նշանակեալ տեղին, էր ընդ նմա եւ Սոջայ Նազարն՝ եւ այլք ոմանք ի Հայոց, ասաց շահն ընդ Սոջայ Նազարին, վասն ձեր շինեմ աստ իջմիածին, զի մի վասն այնմ իջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեսցին սիրտք ձեր, եւ հրամայեմ գնալ բազում ուղտ, ջորի եւ սայլ, զի զքար եւ զհող այնր իջմիածնի քանդեալ բերցեն աստ, զի այնու քարով եւ հողով շինեսցի այս իջմիածինս, որպէս զի առանց իմիք երկրայութեան հաստատեսցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեսցելոյս: Եւ այսու կերպիւ հնարեալ կամէր քանդել զսուրբ իջմիածին: Իսկ Սոջայ Նազարն քանզի ոչ կամէր զքանդումն սուրբ իջմիածնի, զի կսկիծ էր սրտի նորա. եւ առ ի խափանելոյ զխորհուրդ շահին, պատասխանեալ է այսպէս: Թագաւորն ողջ կայցէ, եթէ կամք քո յօժարեսցի շինել զիջմիածին գեղեցիկ եւ հաստատ, կարող ես յարծաթոյ եւ յոսկւոյ շինել, թող թէ ի քարէ. եւ զինչ հարկ է յաղաղս քարի եւ հողոյ զայնքան աշխատութիւնս կրել, եւ զայնքան ծախս ծախել ի վերայ նորա, որպէս զի ի հեռու եւ յօտար աշխարհէ քար եւ հող բերել: Բաւական եւ բարւոք է այս աշխարհիս քարն եւ հողն, եթէ կամիս շինել, սոքոք շինեալ, եւ ընդունելի է մեզ:»23)

19) Անդ՝ էջ 210-211:

20) Մովսէս Գ. Տաթեւացի, 1936, Վիեննա, էջ 32, 47:

21) Պատ. Դաւրիթեցոյ, էջ 219:

22) Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 48:

23) Պատ. Դաւրիթեցոյ, էջ 200-201: